

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Յունիքոմփ» ՓԲԸ-ի բաժնետերի ռոզը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յունիքոմփ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՍԻ կանոնագրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԻ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարոխության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարոխության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարոխության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարոխության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարոխությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ:

Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:



Գագիկ Գյուկասյան
Տնօրեն

9 հուլիսի 2018թ.



Լիլիթ Արաբաջյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու


Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	32,305	33,108
Ոչ նյութական ակտիվներ		499	-
Հետաձգված հարկային ակտիվներ	5	11,728	10,975
Տրված փոխառություններ	6	366,218	205,578
		<u>410,750</u>	<u>249,661</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	255,136	246,243
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	349,027	577,307
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճարներ		2,679	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	8,266	13,647
		<u>615,108</u>	<u>837,197</u>
Ընդամենը ակտիվներ		<u>1,025,858</u>	<u>1,086,858</u>
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ		100	100
Կուտակված շահույթ/(վնաս)		(691)	183
		<u>(591)</u>	<u>283</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	11	55,963	417,206
		<u>55,963</u>	<u>417,206</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	11	513,403	18,388
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	457,083	649,459
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	1,522
		<u>970,486</u>	<u>669,369</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>1,025,858</u>	<u>1,086,858</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2018թ. հուլիսի 9-ին:


Արմեն Բալդոյան

Գործադիր տնօրեն



Կարինե Զախարյան

Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հասույթ	13	1,752,596	1,638,773
Վաճառքի ինքնարժեք	14	(1,402,396)	(1,139,453)
Համախառն շահույթ		350,200	499,320
Այլ եկամուտ	15	64,567	947
Իրացման ծախսեր	16	(55,325)	(71,039)
Վարչական ծախսեր	17	(111,814)	(207,314)
Այլ գործառնական ծախսեր	18	(49,324)	(58,407)
Գործառնական գործունեությունից շահույթ		198,304	163,507
Ֆինանսական ծախսեր, զուտ	19	(50,971)	(29,508)
Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	18	(1,077)	(4,676)
Շահույթ մինչև հարկերը		146,256	129,323
Շահութահարկի գծով ծախս	21	(27,130)	(26,179)
Տարվա շահույթ		119,126	103,144
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		119,126	103,144

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	100	31,739	31,839
Տարվա շահույթ	-	103,144	103,144
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	103,144	103,144
Հայտարարված շահաբաժիններ	-	(134,700)	(134,700)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	(134,700)	(134,700)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	183	283
Տարվա շահույթ	-	119,126	119,126
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	119,126	119,126
Հայտարարված շահաբաժիններ	-	(120,000)	(120,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	(120,000)	(120,000)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	(691)	(591)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	119,126	103,144
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն	9,961	10,610
Տոկոսային ծախս, զուտ	50,971	29,508
Շահութահարկի գծով ծախս	27,130	26,179
Փոխարժեքային տարբերությունից վնաս	1,077	4,676
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>208,265</u>	<u>174,117</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	228,418	(16,865)
Պաշարների փոփոխություն	(8,893)	35,191
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	<u>(192,134)</u>	<u>7,183</u>
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<u>235,656</u>	<u>199,626</u>
Վճարված տոկոսներ	(50,941)	(27,730)
Վճարված շահութահարկ	<u>(32,084)</u>	<u>(14,666)</u>
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>152,631</u>	<u>157,230</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(9,657)	(1,676)
Տրված փոխառություններ	(292,000)	(407,498)
Տրված փոխառությունների մարում	131,360	203,660
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ</i>	<u>(170,297)</u>	<u>(205,514)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	(120,000)	(134,700)
Բանկային վարկերից մուտքեր	669,176	492,344
Բանկային վարկերի մարում	(535,434)	(329,979)
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված զույր դրամական միջոցներ</i>	<u>13,742</u>	<u>27,665</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(3,924)	(20,619)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1,457)	(2,463)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	13,647	36,729
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	<u>8,266</u>	<u>13,647</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: